

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

ՎԱՏԱՆ ՄԱՂԱԹԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱԶԱՆԸ

Երևանի պետական համալսարանն իր գոյության ութսունհինգ տարիների ընթացքում ոչ միայն նպաստել է Հայաստանի տնտեսության վերելքին, այլև լուրջ ներդրում կատարել բարձրագույն կրթության, գիտության ու մշակույթի անդաստանում: Նրա դերը մեծ է եղել մաս հաչ նորագույն գրականության, գրականագիտության ու գրաքննադատության ձևավորման ու զարգացման գործում:

Հիմնադրման առաջին իսկ տարիներին, այլ գիտությունների ներկայացուցիչների հետ մեկտեղ, նրա հարկի ներքո համախմբվեցին հայագիտության ու հայ մշակույթի աշխարհասփյուռ երևելի դեմքեր, որոնց թվում մեծանուն պատմաբաններ Հակոբ Մանանդյանն ու Լեոն (Առաքել Բաբախանյան), Հակոբ Զորյանն ու Վահան Ռշտունին, ակադավոր հայագետներ Հրաչյա Աճառյանն ու Մանուկ Աբեղյանը, Գարեգին Հովսեփյանն ու Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Ստեփանոս Մալխասյանցն ու Գրիգոր Ղափանցյանը, ճարտարապետներ Թորոս Թորամանյանն ու Ալեքսանդր Թամանյանը, քանդակագործ Արա Սարգսյանն ու գեղանկարիչ Հակոբ Կոչոյանը, ազգագրագետ Ստեփան Լիսիցյանն ու իրավագետ Խաչիկ Սամուելյանը, տնտեսագետ Թադեոս Ավդալբեկյանն ու փիլիսոփա և գրաքննադատ Հայկ Գյուլիքեկյանը և շատ ու շատ ուրիշներ, ովքեր այնուհետև, մինչև իրենց կյանքի վերջը, մնացին համալսարանում և ծառայեցին հայ գիտության ու մշակույթի զարգացման և երիտասարդ մասնագետների պատրաստման հայրենամիլեր գործին:

Այս կարկառուն դեմքերի կողքին համալսարանում գիտամանկավարժական աշխատանք էին կատարում նույնպես խոշոր գիտնականներ Արսեն Տերտեղյանը, Յուլա Սանգաղյանը, Սիմոն Հակոբյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Տիգրան Հախումյանը, Խորեն Սարգսյանը, բանագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, աղբյուրագետ Լեոն Մելիքսեթ-Քելը, արևելագետ Գևորգ Ասատուրը և այլք: Նրանք, իրենց հիմնական մասնագիտությունից բացի, կատարում էին ստեղծագործական լուրջ աշխատանք և գրականությանն ու արվեստին ծառայելը համարում իրենց կոչումը:

Այդ առումով երախտագիտությամբ պետք է հիշենք Լեոյի անունը, որը, պատմագիտական կոթողային մեծաթիվ աշխատություններին ու գրքերին զուգընթաց, ստեղծել է բազմաթիվ գեղարվեստական մնայուն երկեր ու գրաքննադատական հոդվածներ: Հայտնի է, որ ստեղծագործական, գրաքննադատական աշխատանքով զբաղվել են մաս Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Աղբալյանը և մեր մյուս մեծերը: Մ. Աբեղյանը գրական ասպարեզ է իջել որպես բանաստեղծ՝ 1888 թ. Ծուշիում հրատարակելով «Նմուշներ» ինքնուրույն ու թարգմանական չափածո գործերի ժողովածուն: Նա նույն տա-

րում «Նոր դար» օրաթերթում տպագրել է նաև «Գալլ Վահան» պատմական վիպակը, իսկ 1889-ին, դարձյալ Օուշիում, լույս է ընծայել «Դավիթ և Մհեր» ժողովրդական դյուցազնավեպը:

Հռչակավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը մանկությունից մեծ սեր է տածել գրականությանն և կատմությանը: Նրա արխիվում պահպանվում է մի տետր, որի մեջ ամփոփված են շուրջ հինգ տասնյակ բանաստեղծություններ: Նա դեռ Պոլսի Կեդրոնական վարժարանի աշակերտ եղած ժամանակ գրական փորձեր է արել:

Հետագա իր ողջ կյանքի ընթացքում մեծանուն լեզվաբանը կապված է մնացել գեղարվեստական գրականությանը, հանդես է եկել քննադատական հոդվածներով, գրել է հուշեր, առաջիններից մեկն է եղել, որ կազմել և խմբագրել է Պետրոս Դուրյանի երկերը, որ առանձին հատորով լույս է տեսել 1948 թ. Երևանում:

Ազգագրագետ Ստ. Լիսիցյանը ևս զբաղվել է գեղարվեստական գրականությամբ, մշակել ժողովրդական մի շարք հեքիաթներ ու առասպելներ, լեգենդներ ու զրույցներ, գրել մանկական պատմվածքներ, որոնք տպագրվել են ժամանակի գրական մամուլում, իսկ հետագայում հրատարակվել են առանձին գրքով (տե՛ս «Ծաղկաքաղ», Երևան, 1960):

Նույնիսկ Վահան Արծրունին, որ եղել է հայ բժշկագիտության ակնառու ներկայացուցիչներից մեկը և հայ իրականության մեջ հայտնի է որպես «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական բառարանի» ու մի շարք այլ արժեքավոր մենագրությունների հեղինակ և հայ բժշկական մամուլի հիմնադիրներից, իր ուժերը փորձել է նաև գեղարվեստական գրականության բնագավառում: Նրա գրչին են պատկանում «Պատրանք» վեպը և «Աղջիկ» վիպակը, որոնք ժամանակին ընթերցողների կողմից ընդունվել են ջերմությամբ:

Պրոֆ. Գ. Ասատուրը մույնպես լուրջ աշխատանք է կատարել գրականության ասպարեզում: Նա առաջին անգամ հիմ վրացերենից ամբողջությամբ հայերեն է թարգմանել վրաց միջնադարյան մեծ բանաստեղծ Օրթա Ռուսթավելու «Վազրենավորը»: Այն տպագրվել է 1937 թ., հիշյալ պոեմի ստեղծման 750-ամյակի տոնակատարության օրերին, Երեվանում: Նա վարպետորեն հայերեն է թարգմանել նաև Ֆիրդուսու «Ծառ-ճամբ»-ից մի հատված («Ռոստամ և Սոհրապ»), որը լույս է տեսել 1934-ին: Նրա գրչին են պատկանում նաև բազմաթիվ այլ թարգմանություններ ռուս և վրաց գրականություններից, ինչպես և ինքնուրույն գործեր, որոնք տպագրվել են առանձին գրքերով: Գ. Ասատուրը ժամանակին համալսարանի ուսանողների ուժերով պատրաստել է մերձարևելյան գրականության մի ժողովածու ևս, որը լույս է տեսել 1931 թվականին Երևանում:

Այդ շրջանում թարգմանական-ստեղծագործական աշխատանքով զբաղվել են արևելագետ Ռուբեն Աբրահամյանը, գրականագետ ու լեզվաբան Սարգիս Մանուկյանը, քաղաքականագետ Գևորգ Ղարաչյանը (Ս. Տ. Արկուներ), երաժշտագետ Հակոբ Հարությունյանը, գրաբարագետ Հարություն Պետրոսյանը և ուրիշներ: Վերջինս եղել է նաև ճանաչված բանաստեղծ: Նա հայերեն է թարգմանել Գյոթեի, Օիլլերի, Հայնեի մի շարք բանաստեղծություններ, ռուս գրականությունից՝ արձակ ու չափածո գործեր, ինչպես և Հոմերոսի «Իլիական»-ից մի հատված, որոնք լույս են տեսել ժամանակի պարբերական մամուլում: Ս. Մանուկյանի թարգմանական գործունեությունը մույնպես հիշատակելի է: Հայնեի «Երգերի գիրքը» բնագրից նրա տողացի թարգմանությամբ և Գ. Սարյանի ու Վ. Նորենցի մշակ-

մամբ լույս է տեսել 1935 թ., իսկ 1936-ին Ե. Չարենցի հետ համատեղ սկսել է թարգմանել Գյոթեի «Ֆաուստը»: Սակայն այդ աշխատանքը նրանց ձեռքակալության հետևանքով մնացել է անավարտ: Ինչպես շատ-շատ համալսարանականների, այնպես էլ այս տաղանդավոր գիտնականի ու թարգմանչի կյանքն ընդհատվել է 1938-ին:

Թարգմանական գրականության բնագավառում իր ուժերն է փորձել նաև լեզվաբան Գուրգեն Սևակը: Առաջինը նա է ամբողջությամբ հայերեն թարգմանել Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգին» չափածո վեպը, որը լույս է տեսել մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակի օրերին: Հայերեն այդ շքեղ գիրքը, որը լույս է տեսել 1949-ին, այսօր դարձել է մատենագիտական հազվագյուտ մուշ: Գ. Սևակն իր թարգմանությանը կցել է Պուշկինի մեծությունը վերհանող և նրա վեպը արժեքորոշող ընդարձակ առաջաբան և միաժամանակ հրատարակությունն օժտել հարուստ ծանոթագրություններով: Գրքի ձևավորումը և նկարագրողումը կատարել է տաղանդավոր նկարիչ Միքայել Արուտչյանը, խմբագրել՝ բանաստեղծ Գեղամ Սարյանը: Այս հրատարակությունը, որ հոբելյանական է և համատեղ ուժերով իրականացրել են Մոսկվան ու Երևանը, այսօր էլ հրատարակչական իր բարձր որակով մնում է հայ գրատպության մի կատարյալ մուշ, որն իր արժեքը չի կորցրել նաև որպես բնագրին մոտ ու հարազատ գեղարվեստական թարգմանություն:

Արվեստի ու գրականության նկատմամբ ունեցած մեծ սիրով, իրենց դասախոսական ու գիտաստեղծագործական աշխատանքով և հասարակական-մշակութային գործունեությամբ երիտասարդ ստեղծագործողների աճին, նրանց կրթության ու դաստիարակության գործին նպաստում են նաև ճանաչված իրավաբան Գրիգոր Չուբարը, հոգեբան-մանկավարժ Գուրգեն Էդիսյանը, ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը, քաղաքականագետ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, գեղարվեստաբան Գարեգին Լևոնյանը (Աշուղ Զիվանու որդին), տնտեսագետ Զաքարե Բաշինջաղյանը (գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի որդին), պատմաբաններ Աշոտ Հովհաննիսյանը, Ստեփան Ներսիսյանը, Հովհաննես Հակոբյանը, Վահան Ռշտունին և այլ անվանի դասախոսներ:

Առաջին տասնամյակների գրական-ստեղծագործական ջերմ ու դեպի իրեն ձգող համալսարանական մթնոլորտի մոտավոր պատկերն անգամ տված չենք լինի, եթե չխոսենք ժամանակի մյուս ճանաչված դասախոսների մասին, ովքեր իրենց բառ ու բանով, գեղեցիկ ու հարուստ լեզվով, համով-հոտով զրույցներով ու անմիջականությամբ ստեղծում էին մի հարուստ գրական բոհեմա: Այդ բոհեմայի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին մեխանիկայի դասախոս Աշոտ Մոխեսիկը (Տեր-Մկրտչյան), որը հայտնի է նաև «Մեծ դարաբաղցի» մականունով, ֆիզիկոս Հարություն Ամթուրը, Հրաչյա Աճառյանը և շատ ուրիշներ: Պատմում են, որ վերջինս իր մասին սուր անեկդոտներ ու ծիծաղաշարժ պատմություններ էր հորինում ու դրանք տարածում ուսանողության շրջանում: Մյուսները ևս ունեցել են իրենց զարմանալի «տարօրինակությունները»: Այդ առումով հատկապես հայտնի է Աշոտ Տեր-Մկրտչյանը, որի անեկդոտներն ու առակախառն զրույցներն իր սաների միջոցով շուրթից շուրթ անցնելով, այսօր էլ «թափառում» են ամենուր:

Այն հեռավոր տարիներին այս պայծառ համաստեղության մեջ տեսնում ենք և անվանի գրողներ Վահան Թորթվենցին, Զապել Եսայանին, Կոստան Զարյանին, որոնք նույնպես նվիրվում են համալսարանական կրթության կատարելագործման ու երիտասարդ

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը. ռազմաճակատ են մեկնում հայրյուրավոր համալսարանականներ, որոնց թվում է՝ մի խումբ գրողներ ու գրականագետներ: Սակայն նրանց մի մասին բախտ չի վիճակվում վերադառնալ խաղաղ ստեղծագործական աշխատանքի: Ռազմի դաշտում զոհվում են բանաստեղծներ Դերենիկ Զարխյանը, Թեան խաչյանը, Սերյոժա Ռոստոմյանը, գրաքննադատներ Գրիգոր Կուլոդյանը, Գառնիկ Ոսկանյանը (Հմայակ Սիրասի եղբայրը), Տոնական Գալստյանը, Ռուբեն Փոքսոդյանը և ուրիշներ:

Պատերազմի շրջանում դարոցն ավարտում և ուսանելու է գալիս արդեն իսկ գրական անուն հանած պատանի բանաստեղծ Պարույր Սևակը, ռազմաճակատից վերադառնում և կիսատ թողած ուսումն են շարունակում Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Ծախեն Թաթևկյանը, Բաղիշ Հովսեփյանը և այլք, ովքեր շուտով մյուս անվանի գրողների հետ իրենց ուսերին են առնում հայ նորագույն գրականության նտպատերազմյան տարիների զարգացման ծանրությունը:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև Երևանի համալսարանի այն շրջանավարտ գրողների ու գրականագետների անունները, ովքեր տարբեր ժամանակներում մեկնել են Վրաստան, Ռուսաստան, Ադրբեջան և այլուր, որտեղ էլ տարածել հայ գիրն ու գրականությունը: Քիչ չեն նրանք: Հիշենք, օրինակ, Սամվել Գրիգորյանին, Աբրահամ Բախշումուն, Աթանես Սեմալին, Արշավիր Ջիդարյանին, Հակոբ Գուրումյանին, Նազարեթ Կիրակոսյանին, գրականագետ, պրոֆ. Գուրգեն Անտոնյանին և մյուսներին:

Սերնդափոխությունը շարունակվում է. 1950-ականներին տարբեր ֆակուլտետներում սկսում են ուսանել գրական ձիրքով ու ակնհայտ կարողություններով օժտված մի խումբ պատանիներ ու աղջիկներ, ովքեր շուտով իրենց տեղն են գրավում մեր նոր շրջանի գրականության մեջ: Ահավասիկ նրանցից մի քանիսը. արձակագիրներ Ջորայր Խալափյան, Ռաֆայել Արամյան, Նորայր Ադալյան, Սերգեյ Ումադյան, Արտաշես Քալանթարյան, Էդուարդ Ավագյան, Վարդգես Պետրոսյան, Ստեփան Ալաջալյան, Գրիգոր Քեշիշյան, Մարգո Ղուկասյան, Ժիրայր Ավետիսյան, Ռուբեն Հովսեփյան, Հովհաննես Մելքոնյան, բանաստեղծներ Միքայել Հարությունյան, Լևոն Միրիջանյան, Նանսեն Միքայելյան, Ալեք խաչունց, Հարություն Հովնաթան, Սասուն Գրիգորյան, Սուրեն Խոջոյան և այլք:

Նույն տասնամյակում էլ, ուսանողական գիտական ընկերությանը կից, պաշտոնապես սկսում է գործել գրական ստուդիա, որն, ի դեպ, սկզբնավորվել էր համալսարանի բացման առաջին իսկ տարիներից: Ծնորհալի ուսանողների ստեղծագործությունները քաջալերվում էին հեղինակավոր գրականագետներ Մ. Մկրյանի, Էդ. Զրբաշյանի, Հր. Թամրազյանի և Ռ. Հարությունյանի կողմից:

Հաջորդ տասնամյակի առաջին կեսին արդեն համալսարան են ընդունվում նոր, շնորհալի երիտասարդներ, ովքեր ուսումնառությանը զուգընթաց լրջորեն զբաղվում են գրական-ստեղծագործական աշխատանքով: Նրանցից հետագայում աչքի են ընկնում Թաթուլ Բոլորչյանը, Ալեքսան Մելակյանը, Յուրի Սահակյանը, Լևոն Ադյանը, Կարո Մելիքսեթյանը, Հրաչյա Մաթևոսյանը, Հենրիկ Բաբախանյանը, Արևշատ Ավագյանը, Ալվարդ Պետրոսյանը, Գևորգ Խաչատուրը, Վահան Մաղալյանը, Անահիտ Պարսամյանը և ուրիշներ: Գրական ստուդիայի պարապմունքները, որոնք այդ շրջանում վարում էր պրոֆ. Էդ. Զրբաշյանը, լինում էին մարդաշատ և ուղեկցվում ստեղծագործական բուռն բանավեճե-

րով ու քննարկումներով: Այդ տարիների շրջանավարտներից են մաս սփյուռքահայ բա-
նաստեղծներ Նշան Ծաֆենը, Վահրամ Հաճյանը, Կարիկ Պասմաճյանը, որոնք, մեկնելով
արտերկիր, շատ բան են անում հայապահպանության և սփյուռքահայ գրականության
զարգացման համար:

Այս խմբից հատկապես ուզում ենք առանձնացնել Հենրիկ Բախչինյանին ու Հրաչյա
Բալյարմյանին, որոնք վերջին երկու տասնամյակներում թարգմանչական լուրջ աշխա-
տանքներ կատարեցին ֆրանսիական և վրացական գրականությունների հին և նոր շըր-
ջանների գրողների գործերը հայ ընթերցողների սեփականությունը դարձնելու ուղղու-
թյամբ: Նրանց թարգմանությամբ լույս տեսան մի շարք արժեքավոր անթոլոգիաներ ու ժո-
ղովածուներ: Պետք է ավելացնենք մաս, որ Հ. Բախչինյանը բանասիրական գիտություն-
ների դոկտոր է, իսկ Հր. Բալյարմյանը՝ թեկնածու:

Սկսած 1970-ականների սկզբից ստույգիս, որի գիտական ղեկավարներն են դառնում
երիտասարդ գրականագետներ Գ. Ամանյանն ու Վ. Գաբրիելյանը, այնուհետև՝ Կ. Աղա-
բեկյանն ու Ս. Աթաբեկյանը, համալրվում է նոր անդամներով՝ Էդուարդ Միլիտոնյան,
Հովհաննես Հարությունյան, Վանո Սիրադեղյան, Հրաչյա Թամրազյան, Վառլեն Ալեք-
սանյան, Վրեժ Իսրայելյան, Ղուկաս Սիրունյան, Սամվել Կոսյան, Լևոն Բլբուլյան, Վա-
հագն Մուղնեցյան, Արտաշես Ղազարյան, Նորայր Բաղդասարյան, Իգնատ Մամյան,
Դավիթ Պետրոսյան, Աղվան Վարդանյան և շատ ուրիշներ: Այս երիտասարդները մա-
խորդ սերնդի հետ լուրջ որոնումներ են կատարում գրականության ասպարեզում, աշխա-
տում քնարերգությունն ու արձակը դուրս բերել նոր հորիզոններ, հարստացնել հանրապե-
տության գրական-թարգմանչական կյանքը:

1980-ականներից ի վեր, ընդհուպ մինչև մեր օրերը, Երևանի համալսարանի տարբեր
ֆակուլտետների հազարավոր շրջանավարտների շարքերից գրական ասպարեզ են մտել
երկու տասնյակից ավելի խոստումնալից գրողներ: Արդեն հրապարակի վրա են մրանցից
շատերի առաջին գրքերը, թարգմանական ու գրաքննադատական ստեղծագործություն-
ները: Վերջին շրջանում հատկապես աչքի են ընկել արձակագիրներ Վարուժան Այվազ-
յանն ու Հասմիկ Դարյանը, Տիգրան Նիկողոսյանն ու Ամահիտ Թարյանը, բանաստեղծ-
ներ Թադևոս Տոնոյանն ու Սուրեն Տավրոսը, Գառնիկ Մկրտչյանն ու Սամվել Յուլյանը,
Հակոբ Սրապյանն ու Ծանթ Մկրտչյանը, սփյուռքահայ Անուշ Նազգաշյանը և այլք: Այ-
սօր էլ համալսարանում ուսանում են մի խումբ խոստումնալից պատանիներ ու աղջիկներ,
որոնք իրենց ստեղծագործական առաջին քայլերն են կատարում պոեզիայի ու արձակի
ասպարեզներում:

Մեծ է հանրապետության Մայր Բուրի դերը մաս գրականագետների ու գրաքննա-
դատների պատրաստման գործում, առանց որոնց անհնար է պատկերացնել գրականու-
թյան պատմությունն ու ընթացիկ գրական կյանքը: Առաջին շրջանավարտներից են Նո-
րայր Դաբաղյանը, Գուրգեն Վանանդեցին, Արամ Ղանալանյանը, Ռուսեթ Հովհաննիսյա-
նը, Մկրտիչ Մկրյանը, Արշալույս Բաբայանը, այնուհետև՝ Սողոմոն Սողոմոնյանը, Հով-
հաննես Մամիկոնյանը, Արամ Իմեհկյանը, Հրայր Մուրադյանը, Էդվարդ Թոփչյանը,
Ասատուր Ասատրյանը, Ռուբեն Զարյանը, Հաջիե Զնդին, Սահակ Բազյանը, Հովհաննես

լանալանջանը, Մինաս Հյուսյանը, Գարեգին Հովսեփյանը, Գառնիկ Ստեփանյանը, Անուշավան Մակարյանը, Վաչե Պարտիզուհին և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի և ետպատերազմյան տարիներին ասպարեզ է իջնում ամալսարանավարտ գրականագետների մի ճոր սերունդ. Վաչե Նալբանդյան, Սուրեն Աղաբաբյան, Սարգիս Հարությունյան, Հրանտ Թամրազյան, Գարիկ Հովհաննիսյան, Հատր Սալախյան, Մայիս Ավդալբեգյան, Լևոն Ասմարյան, Վահագն Մկրտչյան, Սերգեյ Մարինյան, Էդվարդ Զրբաշյան, Պիոն Հակոբյան, Ալբերտ Արիստակեսյան և ուրիշներ, ովքեր 1950-ականներին այս շարքը համալրում են Սևակ Արզումանյանը, Ելենա Ալեքսանյանը, Արամ Գրիգորյանը, Կարլեն Դանիելյանը, Հարություն Ֆելեքյանը և ուրիշներ:

Հետագա տասնամյակներում գրականագիտության և գրաքննադատության ասպարեզում համալսարանի շրջանավարտներից հանդես են գալիս Ազատ Եղիազարյանը, Զալեն Ավետիսյանը, Վարազ Ներսիսյանը, Դավիթ Գասպարյանը, Ավիկ Իսահակյանը և ատ ու շատ ուրիշներ, որոնց հետազոտությունները հարստացնում են մեր գրականագիտությունը: Այս սերնդից ընթացիկ գրական կյանքին մեծ ուշադրություն է դարձրել հատապետ Ալեքսանդր Թովչյանը, որը մասնավորապես և առանձին գրքերում վերլուծել ու արժեքավորել է երիտասարդ գրողներից շատերի ստեղծագործությունները, բազմաթիվ էջեր մվիրել ենրիկ Էդոյանի, Սլավիկ Զիլոյանի, Հովհ. Գրիգորյանի, Արտեմ Հարությունյանի և այլ ամալսարանականների ինքնուրույն ու թարգմանական ստեղծագործություններին: Նույն կարելի է ասել նաև ավելի երիտասարդ գրաքննադատներ Սարգիս Փանոսյանի ու Երիգոր Հակոբյանի մասին:

Երևանի համալսարանն ավարտած գրականագետներից շուրջ հարյուրը դարձել են իտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ, ՀԳԱԱ իսկական ու թղթակից անդամներ, իտության վաստակավոր գործիչներ, իսկ հիսունից ավելին՝ թեկնածուներ ու դոցենտներ: Երանց մեջ կան մաթիսիկ խՍՀՄ գրական մրցանակների, ինչպես նաև Հայաստանի պետական մրցանակի դափնեկիրներ և այլ բարձր տիտղոսներ կրողներ:

Ներկայումս Երևանի պետական համալսարանում աշխատող գրեթե բոլոր գրականագետներն ու լեզվաբանները (և ոչ միայն մրանք) եղել են երբեմնի սաները, որոնցից են Ալբերտ Ծարուրյանը, Գառնիկ Անանյանը, Լարիսա Մնացականյանը, Վազգեն Գաբրիելյանը, Արշակ Մադոյանը, Ժենյա Քալանթարյանը, Վազգեն Սաֆարյանը, Կիմ Աղաբեկյանը, Սամվել Մուրադյանը, Սեդրան Գրիգորյանը, Յուրի Խաչատրյանը և ուրիշներ: Գրականագետների շրջանում ևս կան բանաստեղծներ, արձակագիրներ ու թարգմանիչներ, վքեր գիտությունն ու գեղարվեստը կարողանում են զուգակցել միմյանց՝ այդպիսով պատկերավոր մեր արդի գրականության զարգացմանը: Նրանցից են՝ ակադեմիկոս Լևոն Մկրտչյանը, պրոֆեսորներ Վազգեն Գաբրիելյանը, Հենրիկ Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, դոցենտներ Ռոմանոս Սահակյանը, Հրաչյա Բայրամյանը և շատ ուրիշներ: Իրական-ստեղծագործական աշխատանքով են զբաղվում նաև պրոֆեսորներ՝ ֆիզիկոս Դավիթ Երիցյանը, քիմիկոս Դանիել Գաբակյանը (Զելթոնց), երկրաբան Հոդմիկ Սարգսյանը, իրավաբան Գեղամ Ղարախանյանը, դոցենտներ, տարբեր գիտությունների մերայացուցիչներ Հայկազ Ադամյանը, Էդրա Գրինը, Սվետլանա Խանուսյանը, Մերուսան արությունյանը, Էդուարդ Հարությունյանը, Աշոտ Մաշուրյանը, Ալեքսանդր Սաֆարյա-

ընդ և այլք, ովքեր պարբերաբար հանդես են գալիս գրական մամուլում, տպագրում ժողովածուներ, կատարում թարգմանություններ և դրանով իսկ հարստացնում մեր գրական կյանքը:

Գրական-մշակութային աշխույժ կյանքով է ապրում համալսարանը հատկապես 1960-ականներից այս կողմ: Անցած չորս տասնամյակների ընթացքում նոր շահագործման հանձնված կենտրոնական մասնաշենքի շքեղ դահլիճում մեծածառն գրողների ու մշակութային գործիչների հետ տեղի են ունենում հանդիպումներ ու ասուլիսներ: Համալսարանում այցելում Գ. Սարյանը, Հ. Օրբազը, Ս. Կապուտիկյանը, Ս. Խանգադյանը, Պ. Սևակը, Հ. Սահյանը, Գ. Էմինը, Հ. Մաթևոսյանը և այլ անվանի գրողներ: Գրական ամսփողաց ցերեկայիններ են կազմակերպվում սփյուռքահայ ու օտարազգի գրողների ու արվեստագետների հետ: Վիլյամ Սարոյանի, Արմին Վեզների, Կոստանդին Սիմոնովի, Մարիետա Օաֆիսյանի, Միխայիլ Դուտինի, Դավիդ Սամոյլովի, Սերգեյ Շերվինսկու, Կայսին Կուլիկի, Բորիս Օլեյնիկի հետ հանդիպումները մինչև այժմ էլ հիշվում են շատերի կողմից: Հիշարժան են և գրող ու անվանի գրականագետ Լևոն Մկրտչյանի մախաձեռնությամբ 1970-ական թթ. կեսերից համալսարանում հիմնադրված «Գրական չորեքշաբթիները», որոնք շարունակվում են մինչև այսօր: Այդ «չորեքշաբթիներ» ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, հանդիպումներ հայ և օտարազգի անվանի գրողների, արվեստագետների ու թարգմանիչների հետ:

Նույն տարիներին էր, որ ճանաչված գրականագետ, բանաստեղծ, հայոց լեզվի պատմության ամբիոնի պրոֆեսոր Վազգեն Գևորգյանն ավարտեց Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեամ» պոեմի ու տաղերի աշխարհաբար թարգմանությունը, որոնք լույս տեսան ու վերահրատարակվեցին մի քանի անգամ մեծ համբավ բերելով թարգմանիչին՝ Նրա այդ թարգմանություններով Նարեկացին դարձավ ժողովրդի սեփականությունը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ թարգմանությունները դյուրացրին մահ Նարեկացու երկերն այլ լեզուներով թարգմանելու գործը, որով էլ հայ միջնադարյան հանճարեղ բանաստեղծը դարձավ աշխարհի սեփականությունը: Թարգմանության ասպարեզում շուրջափնի է և ակադեմիկոս Էդ. Աղայանի, պրոֆ. Հ. Հակոբյանի և այլոց դերը, ովքեր ռուսարևմտաեվրոպական ու արևելյան գրականություններից մի շարք նշանավոր երկեր են թարգմանել հայերեն:

Երևանի պետական համալսարանի գրական-մշակութային կյանքի պատկերը թերկլիկին, եթե չնշենք հրատարակչության դերն այդ ասպարեզում, որը փաստորեն ձևավորվել է Մայր Բուրի հիմնադրման հետ մեկտեղ, բայց պաշտոնապես վավերացվել 1927-ին: Անցած 70-ից ավելի տարիների ընթացքում համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել 3,5 հազարից ավելի գրքեր, որոնց մեծ մասը դեռևս չի կորցրել իր գիտական ու գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Երևանի համալսարանի հրատարակչության հունձքն առատ եղավ հատկապես վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում, երբ բազմաթիվ արժեքավոր մենագրությունների, բառարանների ու դասագրքերի հետ մեկտեղ տպագրվեցին տասնյակ գրական հուշարձաններ, հիմք դրվեց «Ուսանողի գրադարան» մատենաշարին: Այդ մատենաշարով լույս տեսան համաշխարհային գրականության ընտիր էջերի հայերեն թարգմանությունները, ուսանողության և ընդհանրապես ըն

թերցասեր հասարակայնության սեփականությունը դարձան Հին Արևելքի, Հունաստանի ու Հռոմի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Ամերիկայի, Իտալիայի, Ռուսաստանի, Վրաստանի և շատ այլ երկրների գրականությունների ընտիր մոտիվները, օտարալեզու հայ գրողների երկերը, որոնց թարգմանության ու կազմման աշխատանքներին ուսանողները և դասախոսները մույնպես մասնակցել են:

Երևանի համալսարանի գրական-մշակութային կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստեցին 1967 թ. այստեղ հիմնադրված «Բանբեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» (1993-ից՝ «Հանդես Երևանի համալսարանի») քառամյա հանդեսները: Սրանցից հատկապես առաջինն իր երեք տասնամյակների գոյության ընթացքում լուրջ դեր է կատարել հայ դասական գրողների գրական ժառանգության անտիպ էջերը գիտական շրջանառության մեջ դնելու, ընթերցող լայն շրջանների սեփականությունը դարձնելու գործում: Մյուս հանդեսը մույնպես գրական ասպարեզ է հանել ինչպես նախկին, այնպես էլ մեր օրերի համալսարանականների գրական երկերը, նրանց անտիպ արձակ ու չափածո գործերը, ինչպես և խրախուսել ուսանողների գրական փորձերը:

Համալսարանի գրական-մշակութային կյանքի նվաճումներից պետք է համարել «Աստղիկ» թարգմանչական տարեգրքի հրատարակությունը: Փաստորեն «Աստղիկը» մեր հանրապետության թարգմանչական անդրանիկ հանդեսն էր: Նրա առաջին պրակի լույսընծայումը 1988-ին իրականացրել է Երևանի համալսարանի հրատարակչությունը: Մինչև այժմ տպագրվել է 13 գիրք, որոնցից երեքը՝ մույն հրատարակչությամբ: Նրա հիմնադրման գործում լուրջ ավանդ ունեն օտար լեզուների դասախոսներ, ճանաչված թարգմանիչներ Սոնա Սեֆերյանը, Ալինա Տոնոյանը, Նվարդ Վարդանյանը և մի խումբ ստեղծագործող ուսանողներ:

Ի սկզբանե համալսարանն ուսանողների շրջանից նորանոր խոստումնալից անուններ է հայտնաբերում և իր հրատարակչությունների միջոցով խրախուսում նրանց գրական քայլերը: Այսպես. 1924 թ. նրանց ստեղծագործությունները տպագրվել են «Նոր ուսանող» հանդեսի, 1930-ականներին՝ «Հարվածային ուսանող», իսկ 1950-ից սկսած՝ «Սովետական ուսանողություն» և «Երևանի համալսարան» թերթերի էջերում: Այս ամենից զատ, 1959 թ. սկսում է հրատարակվել «Ուսանողի քնար» գրական-գեղարվեստական ժողովածուն: Չորս գիրք տպագրվելուց հետո, 1965-ին, նրա հրատարակչությունը դադարում է, իսկ 1981 թ. նորից վերականգնվում, այս անգամ արդեն «Գրական համալսարան» անվամբ և ավելի լայն ծավալով ու ընդգրկումով: Մինչև այժմ լույս է տեսել «Գրական համալսարանի» հինգ պրակ, որոնք «Ուսանողի քնարի» հետ մեկտեղ կազմում են ինը գիրք: «Գրական համալսարանի» 9-րդ հորեյանական հատորը լույս տեսավ վերջերս: Նրա առաջին «Պոեզիա» բաժինը բացվում է Հր. Աճառյանի, Էդ. Զրբաշյանի, Գ. Զահուկյանի և շատ այլ անվանի գիտնականների գողորիկ բանաստեղծություններով և ավարտվում արդեն չորս գրքի հեղինակ, Արցախի գրողների միության անդամ, պատանի բանաստեղծ Գեղամ Աղաջանյանի ստեղծագործությունների շարքով: Գեղամը՝ «արցախյան գոյապայքարի մանուկ երգիչը», ինչպես բնութագրել են նրան, ստեղծագործել սկսել է յոթ տարեկանից: Նրա երգի ձայնը վաղուց է լսվում, նրա մարտաշունչ ոտանավորները շատերին են հուզել ու պայքարի կոչել: Թարթառի ափերին ծնված, բռնագաղթ, մահ ու ավեր տեսած, բայց Արցախը

չլքած պատանին այսօր ուսանում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Ըիշտ է, դեռ երեքուն եմ նրա քայլերը, ոտանավորները դեռ հղկված չեմ, հաճախ ունեմ ակնհայտ թերություններ, բայց դրանք պարզ եմ ու անպաճույճ, արցախյան գետերի ու աղբյուրների պես վճիտ և հայրենի կարոտով ու ցասումով աղեցուն, որոնք հուզում ու պայքարի եմ կոչում մարդկանց Արցախի անկախության ու ազատության համար:

Ինչպես տեսանք, «Գրական համալսարանի» էջերում ուսանողների կողքին տպագրվում եմ նաև դասախոսների ու գրական փորձ ունեցող մյուս համալսարանականների ինքնուրույն ու թարգմանական գործերը: Դա երիտասարդ ստեղծագործողների մոտ ամրապնդում է ինքնավստահությունը և միաժամանակ նպաստում նրանց կարողությունների դրսևորմանը: Այդ հրատարակություններն ինքնընտանքյան համալսարանի գրական-մշակութային կյանքի անբաժան մասն են կազմում և խթանում նրա աշխուժացմանը:

Այսպիսով, Երևանի պետական համալսարանն իր գոյության ութսունհինգ տարիների ընթացքում պատրաստել է մեր գրականության ու դպրության շատ ու շատ գործիչներ: Բավական է նշել, որ Հայաստանի գրողների միության շարքերում 1934 թ. առ այսօր ընդգրկված շուրջ 600 անդամներից 250-ը համալսարանականներ են. արձակագիրներ ու բանաստեղծներ, դրամատուրգներ ու գրականագետներ, հրապարակախոսներ ու լրագրողներ, գիտության ու մշակույթի այլևայլ բնագավառների աշխատողներ: Բազմաթիվ համալսարանականներ նաև այլ ստեղծագործական միությունների անդամներ են:

Ամեն տարի համալսարանը տալիս է հազարից ավելի շրջանավարտ և կատարում նույնքան էլ ընդունելություն: Շրջանավարտներից ոմանք կյանք են մտնում արդեն իսկ գրողի անուն հաճած, վստահ քայլերով, իսկ շնորհալի մորեկները, Հովհ. Օիրազի պատկերավոր լեզվով ասած, «մտքի հանճարեղ բրուտի» ձեռքերում «վայրենի կավի» պես «սափորվում» և նրա գրական ավագանում մկրտված՝ կրկին կյանք են մտնում: Եվ այդպես շարունակվում է համալսարանի գրական սերունդների հերթափոխությունը՝ ի շահ հայրենի գրականության ու մշակույթի զարգացման և հարստության: